



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 03 » մարտի 2015 թ.

N 15

ք. Ստեփանակերտ

Կ.Գ.Գաբրիելյանին ԼՂՀ դատախազության դատախազների և քննիչների ծառայողական առաջխաղացման ցուցակից հանելու մասին

ԼՂՀ գլխավոր դատախազի թիվ 14 առ 23.04.2012թ. հրամանով՝ ԼՂՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի եզրակացության հիման վրա (արձանագրություն N 01 առ 20.04.2012թ.), ԼՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ, արդարադատության 1-ին դասի խորհրդական Կ.Գ.Գաբրիելյանը ընդգրկված էր ԼՂՀ դատախազության դատախազների և քննիչների ծառայողական առաջխաղացման ցուցակում:

Հաշվի առնելով, որ ԼՂՀ գլխավոր դատախազի թիվ 09 առ 02.03.2015թ. հրամանով Կ.Գ.Գաբրիելյանը նշանակվել է ԼՂՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության բաժնի պետի պաշտոնին, ղեկավարվելով «Դատախազության մասին» ԼՂՀ օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով և 10-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. ԼՂՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության բաժնի պետ, արդարադատության 1-ին դասի խորհրդական Կարեն Գեորգիի Գաբրիելյանին հանել ԼՂՀ դատախազության դատախազների և քննիչների ծառայողական առաջխաղացման ցուցակից:

2. Հրամանն ուղարկել ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ԼՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազին ու դատախազին, բաժնիների պետներին, ԼՂՀ քաղաքապետախազներին:

3. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական

Ա.Ա.Մոսիյան